ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

12 ապրիլի, 2020 N 37

ՊԱՐԵՏԻ՝ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N 27 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշմամբ՝ պարետի՝ 2020 թվականի մարտի 31-ի «Արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ» N 27 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1. Որոշման 9-րդ կետից հանել «և գործում է մինչև 2020 թվականի ապրիլի 12-ը՝ ժամը 23:59-ը:» բառերը.

2. Որոշման Հավելված N 1-ի 4-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «3) Մշտական բնակության կամ իրենց նախընտրությամբ պարտադիր ինքնամեկուսացման վայր մեկնող կամ վերադարձող անձանց տեղաշարժը՝ 2020 թվականի ապրիլի 14-ին՝ ժամը 00:01-ից մինչև 23:59:».

3. Որոշման Հավելված N 2-ի Աղյուսակ 1-ում՝

   1) «Մշակող արդյունաբերություն» բաժնում երրորդ սյունակում՝

      ա. 11-րդ կետից հետո լրացնել 12-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

         «12 - Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն».

      բ. «23.52 – Կրի, գիպսի և գաջի արտադրություն» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

         «23.5 – Ցեմենտի, կրի, գիպսի և գաջի արտադրություն».

      գ. «23.5 - Ցեմենտի, կրի, գիպսի և գաջի արտադրություն» կետից հետո լրացնել 23.6-րդ և 25.11-րդ կետերը հետևյալ բովանդակությամբ.

         «23.6 – Բետոնից, ցեմենտից և գիպսից շինվածքների արտադրություն

         25.11 – Մետաղե կոնստրուկցիաներ և դրանց մասերի արտադրություն».

   2) «Շինարարություն» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Անվանում	Կոդ	Թույլատրված	Կոդ	Արգելված
(F) ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ		Մեծամասամբ թույլատրված	43.3	Շինարարության ավարտական փուլի աշխատանքներ

3) «69.2 – Հաշիվների կազմում, հաշվապահական հաշվառում, վերստուգիչ ծառայություններ (աուդիտ), խորհրդատվական ծառայություններ հարկադրման հարցերով՝ այն ընկերություններին, որոնց գործունեությունը սահմանափակված չէ սույն որոշմամբ» կետից հետո լրացնել 71.12-րդ կետը հետևյալ բովանդակությամբ.

«71.12 – Ճարտարագիտական գործունեություն և դրա հետ կապված տեխնիկական խորհրդատվություններ»:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 13-ին՝ ժամը 00:00-ին:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 12/04/20 17:58:46 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ